ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 հոկտեմբերի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

148
(3179)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ԿՈՆՅԱԿԻ» ՀԱՐՑԸ՝ ԿՐԿԻՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հոկտեմբերի 23-ի Կառավարության նիստում վերահաստատեց, որ Հայաստանում չի կարող կոնյակ արտադրվել, քանի որ այն ստեղծվում է միայն Ֆրանսիայի Կոնյակ երկրամասում աճեցված խաղողից:

Փաստորեն, դեպի Եվրոպա ձգտող հայկական իշխանությունների առջեւ խիստ պահանջներ են դրվում, անգամ սահմանվում են ժամկետներ. գրեթե 20 տարի:

«Կոնյակ» անունը հայկական շուկայից հանելու մասին իշխանությունները դեռեւս 2021-ին էին խոսում, ասում, որ Հայաստանն ու Եվրոպական Միությունն առաջիկայում նախատեսում են ֆինանսավորման նոր համաձայնագիր ստորագրել, որով ԵՄ-ն Հայաստանին 3 մլն եվրո գումար կտրամադրեր:

Հայաստանը պետք է դադարեցներ հայկական կոնյակի համար «Կոնյակ» անվան կիրառությունը, այդ գումարով կազմակերպեր եւ մշակեր հայկական խմիչքի համար նոր բրենդ, գովազդեր ու խթաներ դրա օգտագործումն ու տարածումը, ինչպես նաեւ կազմակերպեր հայկական նոր բրենդի դիրքի ու մրցակցության պահպանումն արտաքին շուկաներում:

2021 թվականից ակնհայտ որեւէ փոփոխություններ չեն եղել, ինչն էլ, հնարավոր է, բարկացրել է եվրոպացիներին:

Հիշեցնենք, որ «Կոնյակ» անվանումից հրաժարվելու պահանջը նախատեսված է 2017թ. նոյեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական Միության միջեւ ստորագրված «Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության» համաձայնագրով, որն ամբողջությամբ ուժի մեջ է մտել 2021 թ. մարտի 1-ից:

Նույն համաձայնագրով նախատեսվում էր հրաժարվել նաեւ «Շամպայն» անվանումից: Այս անուններից հրաժարվելու ու նոր անուններ ընտրելու համար Հայաստանին ժամանակ է տրվել մինչեւ 2043 թվականը:

Ստացվում է, որ իշխանությունները մերժում են եւ կոնյակը եւ Արարատը, սակայն շարունակում են պետական գնումներ իրականացնել՝ գնելով «Արարատ» կոնյակ:



Օրերս հայտնի դարձավ, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի վարսահարդարի ամուսինը՝ արդարադատության փոխգնդապետ Ռոբերտ Թամարյանը, օրեր առաջ նշանակվել է Երեւան-Կենտրոն քրեակատարողական հիմնարկի պետ: Թամարյանը 12 տարի է աշխատում է արդարադատության ոլորտում, 2013-ին եղել է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության հատուկ նշանակության բաժնի առաջին կարգի մասնագետ: Եվ, ահա, առաջին կարգի մասնագետից Թամարյանը 12 տարի անց դարձավ Երեւան-Կենտրոն ՔԿՀ-ի պետ: Հետաքրքիր փաստն այն է, որ քրեակատարողական հենց այս հիմնարկում են գտնվում կալանավորված Բագրատ Սրբազանը, Միքայել Սրբազանն ու բարերար, գործարար Սամվել Կարապետյանը: Իսկ ի՞նչ ունեցվածք ունի Ռոբերտ Թամարյանը: Քրեակատարողական հիմնարկի պետի հաստիքը նրա երկրորդ պաշտոնն է այս տարի, մինչ այդ Թամարյանը 2025 թվականի մայիսի 8-ի հրամանով նշանակվել էր ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետ, եւ հենց այս պաշտոնավարման ընթացքում է նա հայտարարագիր ներկայացրել: 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի համաձայն՝ Թամարյանն ունի 3 անշարժ գույք՝ 3-ն էլ բնակարան Երեւանում, որից 2-ը ժառանգություն է ստացել: 2020 թվականին Թամարյանը ձեռք է բերել MITSUBISHI մակնիշի մեքենա: ՔԿՀ-ի պետի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 222 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 10 մլն դրամ, 33 հազար դոլար: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 47 մլն 194 հազար դրամ, որից 6 մլն 776 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է քրեակատարողական ծառայությունից, 1 մլն 495 հազար դրամը եկամտահարկի վերադարձ է, իսկ գրեթե 40 մլն դրամը ստացված փոխառություններ են «Հայէկոնոմբանկ»-ից:



Հոկտեմբերի 25-ին Հովհաննավանքում, Ստեփան Ասատրյանի նախաձեռնությամբ կազմակերպված պատարագի ընթացքում, Արագածոտնի թեմի հոգեւորականների հետ ուշագրավ դեպքեր են եղել: Հոգեւորականներից մեկին նստեցրել են մեքենա եւ վարել 100 մոտ մետր՝ Հովհաննավանքից անհասկանալի ուղղությամբ: Տեղեկացրել էինք, որ հոկտեմբերի 26-ին Նիկոլ Փաշինյանի՝ Հովհաննավանք գալուց եւ Ստեփան Ասատրյանի կազմակերպած պատարագին մասնակցելուց առաջ քաղաքացիական հագուստներով իրավապահները հսկողություն են իրականացրել Արագածոտնի թեմի տարբեր հոգեւորականների նստավայրերում, որպեսզի կանխեն նրանց հնարավոր այցը Հովհաննավանք: Այս իրավիճակին զուգահեռ Փաստաբան Արա Ջոհրաբյանը հայտնել էր, որ 2025թ. հոկտեմբերի 26-ին ոստիկանները փորձում էին Տեր Փառեն քահանա Առաքելյանին բերման ենթարկել, երբ քահանան վաղ առավոտյան գնում էր Սաղմոսավանք՝ Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցելու: Առաջին անգամ փորձ կատարեցին բերման ենթարկել Աշտարակ քաղաքում՝ Թեմի առաջնորդարանի շենքի դիմաց, սակայն երբ տեսան, որ ուղեկցող մարդիկ կան, հեռացան: Ոստիկանների պնդումները («100 տոկոս գնալու ենք», «էդ անվիճելի է»), դադարեցին Տեր Փառենի համառության շնորհիվ, եւ իրավիճակը հանգուցալուծվեց, երբ նրանք համոզվեցին, որ քահանան գնում է Սաղմոսավանք, ոչ թե Հովհաննավանք: Սակայն, մինչ Տեր Փառենին հավատացել ու հանգիստ են թողել, հոգեւորականներից մեկի դեպքում իրավիճակը առավել մտահոգիչ է եղել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ քաղաքացիական հագուստով անձինք (ըստ էության՝ իրավապահները) հոգեւորականի են մեքենայով առեւանգել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ Տեր Եղիշե քահանա Բարսեղյանին քաղաքացիական հագուստով անձինք (ըստ էության՝ իրավապահները) մեքենա են նստեցրել, մոտ հարյուր մետր տարել են, ու երբ համոզվել են, որ նա Հովհաննավանք չի գնում, իջեցրել են նրան մեքենայից, բայց միանգամայն այլ վայրում:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը միակը չէ, որ իրավապահների տեսադաշտում է: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ առաջիկայում աղմկահարույց բացահայտումներ են սպասվում որոշ բուհերում, որտեղ, օպերատիվ գործողությունների արդյունքում, ի հայտ են եկել աղմկահարույց փաստեր: Թե ինչ փաստերի մասին է խոսքը եւ որ համալսարաններում՝ այս պահին այն չենք հրապարակում՝ նախաքննությանը չվնասելու համար. կսպասենք զարգացումներին: Հիշեցնենք, որ 2025թ. հոկտեմբերի 17-ին Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել էին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանը եւ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ԽԱՉԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ

«ՄԵՐ ՄԻՋԻՑ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՋՆՋԵԼ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Նոյեմբերի 16-ին Վաղարշապատում անցկացվելու են ավագանու ընտրություններ: «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է բանաստեղծ Խաչիկ Մանուկյանի հետ, ով «Հայրենիք» կուսակցության կողմից առաջադրված է որպես համայնքապետի թեկնածու:



-Պարոն Մանուկյան, Դուք առաջադրվել եք Վաղարշապատի համայնքապետի ընտրություններին՝ «Հայրենիք» կուսակցության ընտրացուցակով: Ձեր կուսակցության անվանումը խորհրդանշական է, սակայն վերջին տարիներին մեր հայրենիքի գաղափարը կարծես պառակտված է: Ո՞րն է այն հայրենիքը, որի համար պայքարում է «Հայրենիք» կուսակցությունը:

-«Հայրենիք» կուսակցությունը պայքարում է այն հայրենիքի համար, որը սկիզբ է առնում Հայկ Նահապետից: Դա այն հայրենիքն է, որը դարերի ընթացքում հարստացել է իր զավակների գիտությամբ, մշակույթով, ավանդույթներով: Սակայն այսօր մեր աչքի առաջ այդ հայրենիքի արժեքները քայքայվում են: Տարիներ շարունակ գործել են լրտեսական խմբեր, արվել են ներդրումներ, որոնք ուղղված են եղել մեր ազգային նկարագրի խեղմանը: Այսօր, երբ հարձակվում են մեր ամենամեծ արժեքների վրա՝ այդ թվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, շատերը լռում են: Այդ լռությունն ամենածանրն է. կարծես ժողովուրդը թմրած է, ինչպես թմրած են լինում վիրահատության ընթացքում՝ անզգայացման ժամանակ:

Ես դա եմ տեսնում՝ մեզ անզգայացրել են, որպեսզի առանց դիմադրության կարողանան իրականացնել իրենց ծրագիրը: Իսկ մեր լռությունը հնարավորություն է տալիս չարագործներին իրականացնել իրենց չարամիտ նպատակները՝ ջնջելով հայկականությունը: Հավանաբար կան պատվիրատուներ, որոնք շահագրգռված են՝ ոչնչացնելու մեր արժեքահամակարգը: Երբ ազգը վերածվում է ամբոխի, այն դառնում է անկառավարելի եւ կորցնում է իր ինքնությունը: Այդպես են կորչում մեր հիշողությունը, մեր մեծերի պատգամները՝ Կոմիտասի, Թումանյանի, մյուսների: Մարդիկ դառնում են մանկուրտներ, առանց հիշողության ապրող զանգվածներ, որոնց կարելի է ցանկացած կերպ կառավարել:

-Պարոն Մանուկյան, նախընտրական քարոզարշավի ընթացքում ընդդիմությունն ու իշխանությունը փոխադարձաբար թիրախավորում են միմյանց: Ձեզ նույնպես փորձում են կապել «նախկիններ» հետ: Ինչպե՞ս եք վերաբերվում նման պիտակավորումներին:

-Թող գան եւ իմ առջեւ ասեն. ովքե՞ր են այդ «կապողները»: Ես անկախության տարիներին պայքարել եմ իշխանությունների սխալների դեմ՝ բարձրաձայնելով խնդիրները, երբ շատերը լռում էին: Թող նայեն իմ հրապարակումները, որոնք բացահայտ վկայում են՝ ես երբեք որեւէ իշխանության կողմը չեմ բռնել: Ես միշտ քննադատել եմ այն, ինչ սխալ եմ համարել:

Ինձ փորձում են կապել նախկինների հետ այն մարդիկ, որոնք այսօր վերածվել են քաղաքական դիակների, ու այժմ փորձում են այդպիսով վերակենդանանալ: Ես ինքնիշխան հայ եմ: Միակ մարդը, ում խոսքը կարող էր ինձ համար ուղենշային լինել, հայրս էր. նա հիմա չկա: Իսկ այդ երիտասարդներն այնքան չկան, որ հայտարարեն՝ ես որ կողմում եմ: Թող իրենց մասին մտածեն:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ՆՈՐ ՓԱՍՏԱԲԱՆ ՈՒՆԻ

Երեկ՝ հոկտեմբերի 28-ին, շարունակվել է Բաքվում ապօրինի պահվող, Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի գործով շինծու դատավարությունը, որի ընթացքում վերջինիս տրամադրվել է թարգմանիչ: Այս մասին հայտնում է ԱՊԱ գործակալությունը:

Նախագահող դատավորը նշել է, որ նախորդ դատական նիստում Վարդանյանը միջնորդություն է ներկայացրել իր պաշտպանից հրաժարվելու մասին՝ հղում անելով դատավարության ընթացքի վերաբերյալ նրա դժգոհությանը:

Դատարանի որոշման համաձայն՝ Վարդանյանի միջնորդությունը՝ իր պաշտպան Աբրահամ Բերմանից հրաժարվելու մասին, ընդունվել է, եւ Ադրբեջանի փաստաբանների միություն է ներկայացվել պաշտպան նշանակելու խնդրանք:

Դատավորը նշել է, որ Վարդանյանի նոր պաշտպանը Փաստաբանների միության անդամ Էմիլ Բաբիշովն է:

ՓԱՇԻՆՅԱՆԸ «ԱՐԴՅՈՒՆՔԻՑ» ԴԺԳՈՀ Է

Իշխանությունները, ի դեմս Նիկոլ Փաշինյանի, չեն պատրաստվում «նահանջել» եկեղեցու դեմ սկսված արշավից:

«Ժողովուրդ» օրաթերթի՝ իշխանությանը մոտ գտնվող աղբյուրները փոխանցում են, որ Կաթողիկոսի դեմ արշավը շարունակվելու է, իշխանականները ամենօրյա ռեժիմով նրան քննադատելու են՝ հորդորելով հրաժարական տալ: Իսկ Փաշինյանը փորձելու է իր շուրջ հավաքել այն հոգեւորականներին, ովքեր պատրաստ են իր հետ քայլերթով հասնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ըստ իշխանական մեր աղբյուրների՝ Փաշինյանի կարծիքով դեռ չի հասունացել վեհարան գնալու ժամանակը, դրա համար դեռեւս կշարունակեն Հովհաննավանքում պատարագների ժամանակ համախմբել մարդկանց, իսկ երբ նկատեն, որ մարդկանց թիվը ավելանում է, նոր Փաշինյանի ուղեկցությամբ կքայլեն դեպի Մայր Աթոռ:

Ըստ մեր տեղեկությունների՝ կարագալույծ հռչակված Ստեփան Ասատրյանը (նախկինում Տեր Արամ) եւս վստահեցրել է, որ մեծ «բանակ» կհավաքվի իր շուրջ, ու արդեն քայլեր կկարողանան ձեռնարկել Կաթողիկոսի հեռացման առնչությամբ: Կարճ ասած՝ Փաշինյանը հանրության միավորմանն է սպասում դեպի Մայր Աթոռ գնալու համար, ինչն այս կիրակի չստացվեց, քանի որ իրենց ասած «10 հազար մարդու» փոխարեն պետական ռեսուրսների միջոցով, հազիվ, կարողացան 1000 հոգու «տանել» Հովհաննավանք՝ պատարագի:

Փաշինյանն արդյունքից շատ դժգոհ է:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

Երեկ՝ երեկոյան, Դավիթ Համբարձումյանին կալանավորեցին ինքնաթիռից դուրս գալուց անմիջապես հետո:

Հիշեցնենք, որ Երեւանի քրեական դատարանը (դատավոր Ժ. Չիչոյան) հրապարակեց դատավճիռ, որով Մասիս համայնքի ղեկավար, ՀՀ վարչապետի թեկնածու Դավիթ Համբարձումյանին դատապարտեց 6 տարի 3 ամիս ժամկետով ազատազրկման, վերացրեց գրավը եւ որպես խափանման միջոց կիրառեց կալանք:

Վճռի կայացման պահին Համբարձումյանը Ռուսաստանում էր: Երեկ նա վերադառնում էր Հայաստան:

ԻՆՉՈ՞Ւ Է ԴԱՍԱԽՈՍԸ ՀԵՌԱՑՎԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արուսյակ Մանավազյանի դուստրը ԵՊՀ-ում դասի ժամանակ գաղտնի տեսանկարահանել է միջազգային հարաբերությունների ֆակուլտետի արդեն նախկին դասախոս, գիտությունների թեկնածու Սահակ Մանուկյանի դասախոսության մի հատված, որտեղ վերջինս ուսանողներին հստակ օրինակով բացատրելիս է եղել վիրավորանք եւ զրպարտություն տերմինների տարբերությունը: Մանավազյանի դուստրը տեսանյութն ուղարկել է պատգամավոր մորը, ինչից հետո դասախոսին ազատել են աշխատանքից՝ «ակադեմիական միջավայրում ոչ հարիր բառապաշար օգտագործելու համար»: «Նյուզ.էյէմ» լրատվամիջոցը գրում է. «ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի արդեն նախկին դասախոս, գիտությունների թեկնածու Սահակ Մանուկյանը պատմեց, որ համալսարանում իր հերթական դասախոսությունը նվիրված էր քաղաքական ռեժիմներին, եւ դեմոկրատական քաղաքական ռեժիմը ներկայացնելու ժամանակ խոսել է նաեւ խոսքի ազատության մասին՝ նշելով, որ այն չի կրում բացարձակ բնույթ անգամ դեմոկրատական ռեժիմի պայմաններում:

«Նշել եմ, որ խոսքի ազատությունը սահմանափակվում է, երբ հասնում է դիմացինի արժանապատվության ոտնահարմանը, եւ այստեղ խնդիր կարող է առաջանալ կապված վիրավորանքի եւ զրպարտության հետ: Եվ որպեսզի ուսանողների մոտ տպավորվի, ես նրանց օրինակներ եմ ներկայացրել: Մասնավորապես սկսել եմ Scotch and Whiskey ֆիլմից, որտեղ մի դրվագ կա, երբ Սոս Ջանիբեկյանը իր զոհին (որին մարմնավորում է Ռաֆայել Երանոսյանը) ոչ միայն զրկած է լինում ազատ տեղաշարժման իրավունքից, այլ նաեւ նրան բնորոշում է մի բառով, որի վերաբերյալ ես ուսանողներին հարց եմ տվել՝ տվյալ բառը զրպարտչակա՞ն բնույթի արտահայտություն է, թե՞ վիրավորական (բառը ներկայացված չէ - խմբ. «Ժող.»): Ուսանողներն այդ պահին չեն կարողանում կողմնորոշվել եւ ճիշտ պատասխանել, ես մոտ 40 րոպեանոց դասախոսություն եմ նվիրում այս երկու հասկացությունների տարբերությանը: Վերջում բոլորը միանշանակ հանգում են այն եզրակացության, որ սա վիրավորական բնույթի արտահայտություն է: Ուսանողներից մեկը դասախոսությունը լսելու եւ հասկանալու փոխարեն զբաղվել է այլ՝ անթույլատրելի գործունեությամբ»,-ասաց Մանուկյանը:

Սահակ Մանուկյանը, իր խոսքով, ֆիլմից բացի այլ օրինակներ էլ է բերել իրական կյանքից՝ ցույց տալու համար, որ նույն բառը մի դեպքում կարող է դիտարկվել որպես վիրավորանք, մեկ այլ դեպքում՝ զրպարտություն:

«Եվ ես ոչ մի ավելորդ բառ, քան այն, ինչ ներկայացրի, չեմ արտաբերել: Լսարանում, բացի պատգամավորուհու աղջկանից, ներկա են եղել եւս 70 ուսանողներ, որոնցից ոչ ոք դժգոհ չեն եղել, այլ ընդհակառակը՝ բավականին հետաքրքրված են եղել: Անգամ դասի ավարտվելուց հետո նրանք շարունակում էին ինձ հարցեր ուղղել»,-պատմել է դասախոսը»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԵՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունում կայացավ ՀԿԽԸ Նախագահ Դավիթ Ներսիսյանի եւ Իրանի Կարմիր Մահիկի նախագահ Փիրհոսեյն Քոլիվանդի մամուլի ասուլիսը, որի ընթացքում երկու երկրների մարդասիրական կառույցների ղեկավարները խոսեցին համատեղ նոր ծրագրերի եւ գործընկերային հարաբերությունների խորացման մասին:

Հանդիպման ընթացքում Հայկական Կարմիր խաչի եւ Իրանի Կարմիր Մահիկի ընկերությունների ղեկավարները ստորագրեցին համագործակցության հուշագիր:

Հայկական Կարմիր խաչի ընկերության նախագահ Դավիթ Ներսիսյանն իր խոսքում նշեց, որ հայկական կողմն անչափ կարեւորում է համագործակցությունն արտասահմանյան գործընկերների հետ՝ նպատակ ունենալով սերտ կապերի միջոցով դրանք առավել խորացնել ու զարգացնել:

«Անցյալ տարի Լոռու մարզում տեղի ունեցած ջրհեղեղից հետո Իրանի Կարմիր Մահիկի ընկերությունը մեզ ուղարկեց օգնություն: Դրանով իսկ նոր շունչ հաղորդվեց մեր հարաբերություններին: Իրանական Կարմիր Մահիկը հարեւան երկրում բավականին մեծ ազգային ընկերություն է՝ ունենալով ավելի քան 80 հազար աշխատակից ու 3 միլիոն կամավոր: Իրանի Կարմիր Մահիկն ունի բազմաթիվ հնարավորություններ եւ ցանկություն է հայտնել սերտ համագործակցություն ծավալել մեզ հետ: Այսօր կնքվելիք հուշագրի շրջանակում երկկողմ հարաբերություններն ապագայում ավելի կխորանան, եւ արդեն կանցնենք համատեղ պրակտիկ գործողությունների»,- ասաց Ներսիսյանը:

Նրա համոզմամբ՝ սերտ համագործակցությունը հնարավորություն կտա ավելի շատ թվով մարդկանց օգտակար լինել:

«Իրանն ու Հայաստանը սերտորեն համագործակցում են բազմաթիվ ոլորտներում:

Հայկական պատվիրակությունն Իրանում գտնվելու օրերին անմիջականորեն ծանոթացավ մեր հնարավորություններին, եւ այդպես մեկնարկեց համագործակցության նոր փուլը: Պատրաստ ենք փոխանակել փորձը, հմտությունները փրկարարական աշխատանքների, բժշկության, արագ արձագանքման գործունեության ոլորտներում:

Կարեւորում ենք արդի տեխնոլոգիական հնարավորությունների համատեղ կիրառումը, բուժսարքավորումների ու դեղորայքի, ինչպես նաեւ միմյանց տեքստիլ արտադրանքի տրամադրումը:

Մենք Իրանում խթանում ենք նաեւ գործունեությունն ավանդական բժշկության, բուսաբուժության բնագավառում՝ նպաստելով մասնագիտացված կենտրոնների ստեղծմանը»,- ասաց Քոլիվանդը:

ՎԱԶԳԵՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՑ ՀԵՐՔՈՒՄ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՄՈՌԱՑԵԼ ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ՓՈԴՔԱՍՏԸ

Դեռեւս օգոստոսին 5-ին դատական հայց է ներկայացվել «Իմնեմնիմի» փոդքաստի համահեղինակ Վազգեն Սաղաթելյանի դեմ:

Դատական հայցերը ներկայացրել են իշխանության ներկայացուցիչները, ովքեր պահանջում են հերքում՝ իրենց մասին անձնական տեղեկություններ հրապարակելու առնչությամբ:

Հիշեցնենք, որ դեռեւս հուլիսին «Իմնեմնիմի» փոդքաստի շրջանակում, ուղիղ եթերում Վազգեն Սաղաթելյանի եւ Նարեկ Սամսոնյանի մասնակցությամբ «Ով ում է դոմփում ՔՊ-ում» վերնագրով փոդքաստի ընթացքում ՔՊ-ական պաշտոնյաների մասին անձնական տեղեկություններ էին հրապարակել, որը, ըստ ներկայացված հայցերի, զրպարտություն է: Պաշտոնյաները պահանջում են հերքում եւ փոխհատուցում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ Վազգեն Սաղաթելյանին դատի են տվել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, նրա ընտանիքի բարեկամուհի Աննա Աբրահամյանը, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավորներ Արուսյակ Մանավազյանը, Հասմիկ Հակոբյանը, ինչպես նաեւ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Տիգրան Պետրոսյանը:

«Ժողովուրդ»-ը տեղեկացավ, որ դատարանում հայցադիմումներն արդեն ընդունվել են վարույթ: Տեղեկացանք, որ Վազգեն Սաղաթելյանի դեմ ՔՊ-ական պատգամավոր Հասմիկ Հակոբյանի հայցով դատական նիստը նշանակված է նոյեմբերի 14-ին:

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի դատական հայցն ընդդեմ Սաղաթելյանի մեկ անգամ արդեն կայացել է, ու առաջիկայում կնշանակվի նոր նիստի օր:

Աննա Աբրահամյանի հայցի քննությունը կսկսվի 2026 թվականի հունվարի 15-ին:

Իսկ ինչ վերաբերում է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Տիգրան Պետրոսյանի եւ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արուսյակ Մանավազյանի հայցերին, ապա դրանք վարույթ են ընդունվել ու առաջիկայում նիստերի օրեր կնշանակվեն:

Հավելենք, որ ՍԱՏՄ ղեկավարը Սաղաթելյանից պահանջում է հօգուտ իրեն բռնագանձել 4.000.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության դիմաց ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Պետրոսյանը պահանջել է նաեւ Սաղաթելյանին պարտավորեցնել, որ նույն լրատվամիջոցով կամ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող տպագիր մամուլով իրենից հրապարակային ներողություն խնդրի: Նշենք, որ Արմ. Մանավազյանն էլ պահանջել է 1 մլն դրամ եւ հերքում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Եվրոպական խորհրդարանը հրապարակել է հայ-ադրբեջանական հարաբերությունների վերաբերյալ փաստաթուղթ: Այն ուսումնասիրում է Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած պատերազմները, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների ներկայիս վիճակը, ինչպես նաեւ ԵՄ-Հայաստան եւ ԵՄ-Ադրբեջան երկկողմ հարաբերությունները: Անդրադառնալով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկարաժամկետ խաղաղության հավանականությանը՝ փաստաթղթում նշվում է, որ վարչապետ Փաշինյանի կառավարությունն արդեն իսկ զգալի քաղաքական կապիտալ է ծախսել Ղարաբաղում պարտությունից հետո:

Այն ընդգծում է, որ Փաշինյանի քաղաքական խոցելիությունը ցույց է տվել նրա՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վատ արդյունքները մարտին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: «Չնայած կառավարության հանրային աջակցության նվազմանը, նրա քաղաքական մրցակիցները դեռեւս հետ են մնում: Բաքվին ցանկացած հետագա զիջում, հատկապես, եթե դրանք լինեն սահմանադրական փոփոխությունների տեսքով, կօգտագործվի որպես քաղաքական զինամթերք հայկական ընդդիմադիր կուսակցությունների կողմից՝ 2026 թվականի հունիսին նախատեսված խորհրդարանական ընտրություններից առաջ:

Այս համատեքստում Փաշինյանն արդեն հայտարարել է նոր սահմանադրություն ընդունելու իր մտադրության մասին, որը ներկայումս ներկայացվում է որպես Հայաստանի «Չորրորդ Հանրապետության» սկիզբ: Այնուամենայնիվ, սահմանադրական հանրաքվե դեռեւս չի անցկացվել, հնարավոր է՝ 2026 կամ 2027 թվականի աշնանը: Սկզբունքորեն, նոր սահմանադրությունը պետք է հաստատվի ազգային հանրաքվեով՝ մեծամասնության ձայներով եւ գրանցված ընտրողների առնվազն 25%-ի մասնակցությամբ: Այս նպատակին հասնելը դժվար կլինի, եթե փոփոխությունները ընկալվեն որպես Ադրբեջանի կողմից լրացուցիչ ճնշում:

Այս սցենարից խուսափելու համար առաջարկվում է, որ կառավարությունը կարող է խորհրդարանական ընտրությունները եւ հանրաքվեն անցկացնել նույն օրը կամ փնտրել այլընտրանքներ: Հայաստանում ձախողված սահմանադրական հանրաքվեն, բացի արդեն թուլացած վարչապետ Փաշինյանի համար լուրջ քաղաքական հարված լինելուց, կհանգեցնի Ադրբեջանի կողմից մեղադրանքների, որ Հայաստանը պատրաստ չէ խաղաղության եւ կարող է պոտենցիալ կերպով խթանել ադրբեջանական իստաբլիշմենթի ամենաագրեսիվ տրամադրությունները: Մյուս կողմից, անժամկետ համաձայնագրի նախագծի ստորագրումը կարող է բացել խաղաղության հնարավորությունների պատուհան:

Այս անկայուն հավասարակշռության մեջ, որտեղ Հայաստանն ավելի շատ բան ունի խաղադրույքի տակ, եւ Ադրբեջանը բացահայտորեն հայտարարում է, որ չի շտապում խաղաղության համաձայնագիր կնքել, երրորդ կողմերի դիրքորոշումը, նույնիսկ սահմանափակ լծակներով, կարող է զգալի ազդեցություն ունենալ: «Այս համատեքստում ԱՄՆ-ի գլխավորությամբ օգոստոսի 8-ին Վաշինգտոնում կայացած գագաթնաժողովի արդյունքները չափազանց կարեւոր են: Այլ խաղացողներ՝ առաջին հերթին ԵՄ-ն եւ Թուրքիան, կարող են նույնքան կարեւոր դեր խաղալ դեռեւս փխրուն խաղաղության գործընթացի ամրապնդման եւ զուգահեռ խնդիրների (օրինակ՝ սահմանների սահմանազատման եւ հաղորդակցության) լուծման ուղիներ գտնելու գործում՝ թույլ տալով երկու երկրներին սկսել վայելել խաղաղության օգուտները նույնիսկ վերջնական տեքստի ստորագրումից առաջ», - եզրակացնում են փաստաթղթի հեղինակները:

ԿՈՉՈՒԲԱԵՎԻ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՓՈԽՎԵՑ

Էրիկ Ալեքսանյանը գրում է. «Ալեքսանդր Կոչուբաեւի խափանման միջոց կալանքը փոխվեց բացակայելու արգելքով:

Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ գլխավոր դատախազ տիկին Աննա Վարդապետյանին մարդասիրական բարձր մոտեցում ցուցաբերելու համար: Ինչպես նաեւ լրատվության համայնքին, հարազատներին, ընկերներին այս պահին մեր կողքին գտնվելու համար»:

Հիշեցնենք, որ երեկ՝ հոկտեմբերի 28 ին փաստաբանը բաց նամակով դիմել էր գլխավոր դատախազին՝ խնդրանքով՝ վերանայել իր պաշտպանյալ Ալեքսանդր Կոչուբաեւի նկատմամբ կիրառված կալանքը: Նամակում փաստաբանը հղում է կատարում ընտանիքում ստեղծված ծանր իրավիճակին՝ նշելով, որ Կոչուբաեւի կնոջ առողջական վիճակը երեխայի ծնվելուց հետո կտրուկ վատթարացել է, ինչը պահանջում է անհապաղ մարդասիրական արձագանք եւ դատախազական միջամտություն:

Ավելի ուշ Ալեքսանյանը հայտնեց, որ Ալեքսանդր Կոչուբաեւի կինը վերակենդանացման բաժանմունքում է՝ ծայրահեղ ծանր վիճակում. նրան միացված է արհեստական շնչառության սարք:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԴԱՏԱՎՈՐ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՄԻՔԱՅԵԼ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՓՈԽՎԵԼ Է

ՊԲ նախկին հրամանատար, գեներալ լեյտենանտ Միխայել Արզումանյանի խափանման միջոց կալանքը փոխարինվեց տնային կալանքով:

Որոշումը կայացրել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վարդգես Սարգսյանը, գրել է պաշտպան Երեմ Սարգսյանը:

Հիշեցնենք, որ 2022 թվականի օգոստոսի 30-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված մեծածավալ քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել էր, որ կոչումով գեներալ-լեյտենանտ Մ.Ա.-ն, Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած ագրեսիվ պատերազմի ընթացքում, հայտարարված ռազմական դրության պայմաններում՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ից մինչեւ նոյեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում, Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում անփույթ վերաբերմունք էր դրսեւորել իր ծառայողական պարտականությունների նկատմամբ՝ չկատարելով եւ ոչ պատշաճ կատարելով դրանք, որպիսի գործողություններն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ. հակառակորդի զինված ուժերն ամբողջությամբ իրենց վերահսկողության տակ են վերցրել Շուշի քաղաքը եւ մատույցները, յուրային ստորաբաժանումները կրել են զոհեր եւ վիրավորներ:

Մ.Ա.-ն Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում անփույթ վերաբերմունք էր դրսեւորել իր ծառայողական պարտականությունների նկատմամբ՝ չկատարելով եւ ոչ պատշաճ կատարելով դրանք, որպիսի գործողություններն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ. 2020 թվականի նոյեմբերի 2-ին՝կեսօրին, հակառակորդի ստորաբաժանումներն աջ թեւից շրջանցել են յուրային N ստորաբաժանման անձնակազմին (չնայած այն հանգամանքին, որ ստորաբաժանման հրամանատարը Մ. Ա.-ին զեկուցել էր պաշտպանության բնագծի աջակողմյան հատվածի չպահվելու, իսկ հետագայում՝ այդ տեղամասով հակառակորդի ստորաբաժանումների շրջանցում կատարելու մասին)՝ Սղնախ գյուղից շարժվելով «Նաբիլար» եւ «Ջառըսլի» կոչվող տեղամասերի ուղղություններով՝ Շուշի քաղաքի եւ Լիսագոր բնակավայրի միջտարածություն, որից հետո նոյեմբերի 4-ին՝ժամը 02:00-ի սահմաններում, Շուշի-Լիսագոր մայրուղու «Նաբիլար» եւ «Ջառըսլի» կոչվող տեղամասերում հատել են մայրուղին, անցել «Իսահակի Աղբյուր» կոչվող տեղամասի ձորերի ու բարձունքների ուղղությամբ՝ տիրելով բարձունքին, կուտակել իրենց ուժերը եւ առաջխաղացումը զարգացրել դեպի Շուշի քաղաք, այնուհետեւ շրջանցել են Շուշի - Քարինտակ խաչմերուկում տեղակայված յուրային ստորաբաժանումներին եւ նոյեմբերի 5-ին՝ երեկոյան, Շուշի-Ստեփանակերտ ավտոճանապարհի վրա գտնվող լցակայանի խաչմերուկի մոտակայքից ներթափանցել Շուշի քաղաք՝ նոյեմբերի 7-ից ամբողջությամբ վերահսկողության տակ վերցնելով Շուշի քաղաքը եւ մատույցները:

2022 թվականի օգոստոսի 30-ին Մ.Ա.-ին մեղադրանք էր առաջադրվել՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 3-րդ մասով (համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասին, այն է՝ զինվորական պաշտոնեական անփութություն): Ազատության մեջ գտնվող մեղադրյալ Միքայել Արզումանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նույն օրը որոշում էր կայացվել վերջինիս ձերբակալելու մասին:

Միքայել Արզումանյանը կալանավորված էր արդեն երեք տարի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ 2024 թվականին Ստեփանավանում սպանել էին 21-ամյա Հայկ Մ-ին: Սպանության համար մեղադրյալի աթոռին էին 4 անձինք, որոնցից մեկը Էրիկ Դադիվանյանն էր:

Նախաքննական մարմինը նրան մեղադրանք էր առաջադրել այն բանի համար, որ նա 2024 թվականի հուլիսի 9-ի լույս 10-ի գիշերը, ընկերների՝ Յուրա Մկրտումյանի, Գեղամ Նազարյանի, Գոռ Հակոբի Նազարյանի հետ, Հայկ Մաղաքյանին հրավիրել են Յուրա Մկրտումյանի ընտանիքի կողմից տնօրինվող՝ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի Անդրանիկի 5 հասցեի տուն, որտեղ վիճաբանության ժամանակ, Գեղամ եւ Գոռ Նազարյանները, Էրիկ Դադիվանյանը եւ Յուրա Մկրտումյանը, խմբի կազմում, փոխլրացնելով միմյանց գործողությունները, Հայկ Մաղաքյանին ապօրինաբար կյանքից զրկելու՝ սպանելու դիտավորությամբ, բութ, կոշտ, ինչպես նաեւ կտրող շեղբ ունեցող առարկաների գործադրմամբ առնվազն 5 հարվածներ են հասցրել Հայկ Մաղաքյանի գլխի, ինչպես նաեւ որովայնի առաջնային եւ հետին մակերեսներին՝ սպանելով նրան:

Այնուհետեւ Էրիկ Դադիվանյանը, ինքնությունը պարզված անձի եւ Գոռ Նազարյանի հետ, վերջինիս վարած ավտոմեքենայով հիշյալ բնակարանից Հայկ Մաղաքյանի դին տեղափոխել եւ թաքցրել է նույն բնակավայրի «Գառադոկ» կոչվող հանդամասում, մասամբ այրել դիակի հագին եղած հագուստները եւ դին, հետո ծածկել դրանք հողով ու քարերով:

Արդյունքում, երբ հոկտեմբերի 27-ին կայացել է այս գործով դատական նիստը, սպանված 21-ամյա տղայի մայրը դատարանում դանակով հարվածել է իր որդու սպանության գործով մեղադրյալ Էրիկ Դադիվանյանին ու փախել դատարանից:

Դատելով կատարվածից՝ մայրը փորձել է այս կերպ վրեժխնդիր լինել իր որդուն դաժանաբար սպանողներից մեկից:

ԲԴԽ-ից հայտնել են, որ դանակահարվածին վիրահատել են, նրա վիճակը կայուն է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԵՏԱԽՈՒՋՎՈՂԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Համայնքային ոստիկանության Նոր Նորքի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հոկտեմբերի 22-ին Խաղաղ Դոնի փողոցում հայտնաբերել եւ բաժին են տեղափոխել 45-ամյա մի տղամարդու, որը սեպտեմբերի 9-ից հետախուզվում էր, առանց իրացնելու նպատակի, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների կամ պրեկուրսորների ապօրինի շրջանառության փորձի մեղադրանքով. նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Ավարտվել է բազմադրվագ, մեծածավալ, նախապես ծրագրված եւ համատեղ մշակված հանցավոր մեխանիզմներով իրականացված խարդախությունների հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Քննչական կոմիտեից հայտնում են, որ նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Ն.Պ.-ն, հափշտակություն կատարելու ուղղակի դիտավորությամբ, ինչպես միայնակ, այնպես էլ այլ անձանց հետ համատեղ մշակել է խարդախություններ կատարելու հանցավոր մեխանիզմներ:

Մասնավորապես, հանցավոր խմբի անդամները տաքսի ծառայություն մատուցող եւ բեռնափոխադրմամբ զբաղվող վարորդներին գրավիչ գներով պատվերներ են կատարել եւ խնդրել տարբեր չափերի գումարներ փոխանցել իբր իրենց պատկանող, սակայն իրականում տաքսի ծառայություն մատուցող այլ վարորդների բանկային հաշիվներին, ովքեր իրենց հերթին գումարները կանխիկացրել եւ տրամադրել են Ն.Պ.-ին՝ այդպիսով հափշտակելով քաղաքացիների կողմից փոխանցված գումարները:

Բացի դրանից, հանցավոր խմբի անդամները զանգահարել են տարբեր քաղաքացիների եւ ներկայացել իբրեւ մսի մատակարարներ, այնուհետեւ կեղծ տեղեկություններ հայտնելով՝ հափշտակել են նաեւ վերջիններիս պատկանող մորթված անասունները:

Հանցավոր խմբի անդամների կողմից տուժողներից հափշտակված գումարների չափն ընդհանուր կազմել է շուրջ 10 մլն ՀՀ դրամ:

Նախաքննության ընթացքում Ն.Պ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով (խարդախությունը) (105 դրվագ):

Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝այն հաստատելու եւ ըստ էության քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Հոկտեմբերի 27-ին ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի ծառայողները խուզարկության են ենթարկել դատապարտյալի մոտ տեսակցության եկած քաղաքացի Ա.Դ.-ին: Այս մասին հայտնում են ՔԿԾ-ից:

Խուզարկության արդյունքում հայտնաբերվել է, որ Ա.Դ.-ն ունեցել է փաթեթ, որում առկա է եղել առանձնապես խոշոր չափի՝21,3 գրամ քաշով, ափիոն տեսակի թմրամիջոցին նմանվող սեւ զանգված:

Ա.Դ.-ն ձերբակալվել է Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Վանաձոր» տարածքային բաժնի ծառայողների կողմից եւ հայտնաբերված զանգվածի հետ ներկայացվել ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 27-ից 28-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 118 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԻՐԱՆՑԻ ՉԼՈՒԾՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոկտեմբերի 25-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստանի Հանրային խորհրդի անդամների հետ այցելել էր Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանց գյուղ: Նա Հանրային խորհրդի անդամներին ցույց էր տալիս Կիրանցի «խաղաղության պատը», որը, Փաշինյանի խոսքերով, գյուղի դպրոցի աշակերտների հոգեբանական աջակցության համար է կառուցվել, որպեսզի երեխաները չտեսնեն Ադրբեջանի տարածքը:

Կիրանց բնակավայրը բազում չլուծված հիմնահարցեր ունի, որոնց լուծմամբ պետք է զբաղվի Կառավարությունը Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: 2024 թվականի դեկտեմբերին Կիրանցը գազիֆիկացվել է, սակայն գրեթե մեկ տարի անց սահմանամերձ գյուղում բնական գազի բաժանորդներ չկան, գյուղ մտած գազատարից դեպի Կիրանցի բնակիչներին պատկանող առանձնատներ գազի ճյուղավորումներ չեն անցկացվել. դրա վերաբերյալ գոյություն ունեն իրավական բնույթի ինչ-որ խնդիրներ:

Ինչո՞ւ Կիրանցի բնակիչները չեն կարողանում դառնալ բնական գազի բաժանորդներ: Այս մասին տեղեկատվական հարցում ենք ուղարկել Տավուշի մարզպետ, Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր Հայկ Ղալումյանին: Տավուշի մարզպետի աշխատակազմից պատասխանել են, որ այդ հարցով պետք է դիմել Իջեւանի համայնքապետարան:

Գյուղում բնական գազի բացակայությունը Կիրանցում ավելի է սրել անտառից անվճար, ինքնապատրաստումով, մինչեւ 8 խորանարդ մետր վառելափայտի թափոնի պատրաստման եւ տեղափոխման խնդիրը: Կիրանցի բնակիչներից տեղեկացանք, որ գյուղում շատ քիչ ընտանիքներ կան, որ կարողացել են օգտվել վառելափայտի թափոնի աջակցությունից:

Աշունը վաղուց կիսվել է, սակայն Կիրանցում ոչ մի քառակուսի մետր աշնանացան չի արվել. դա այն դեպքում, որ այս տարի գործում է աշնանացան ցորենի մշակության աջակցության պետական ծրագիր, յուրաքանչյուր հեկտար աշնանացան ցորենի համար պետական բյուջեից ցորեն մշակողին տրվում է 80 հազար դրամ աջակցություն:

2023 թ. Կիրանցում հնձվել է 37 հեկտար աշնանացան ցորեն: 2024 թվականին, սահմանազատման անվան տակ միակողմանի կերպով, ապօրինի ձեւով Կիրանց գյուղի ավելի քան 15 հեկտար հողերը Ադրբեջանին հանձնելուց հետո՝ Կիրանցում ցանվել է շուրջ 6 հեկտար աշնանացան ցորեն: Այս տարի դեռ աշնանացան չի արվել:

2024 թվականի սեպտեմբերի 1-ին գործարկվեց Կիրանցի հիմնական դպրոցի նոր շենքը, որը նախատեսված է 100 աշակերտի համար: Նախկինում հայտարարվում էր, որ դպրոցի նորակառույց շենքի գործարկումից հետո Կիրանցի հիմնական դպրոցը կստանա միջնակարգ դպրոցի կարգավիճակ: Անցել է ավելի քան մեկ տարի, բայց Կիրանցի դպրոցի կարգավիճակը չի փոխվել. գյուղի բարձր դասարանցիները ամեն օր մեկնում են Իջեւան համայնքի Սարիգյուղի եւ Ներքին Ծաղկավանի միջնակարգ դպրոցներ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓՈՔՐԻԿԸ ԴԵՌ ՈՐՈՆՎՈՒՄ Է

Ո՞Վ Է ԵՂԵԼ ԿՈՐԱԾ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ

Ծափաթաղում որոնողափրկարարական աշխատանքները շարունակվում են. երեխայի Տիգրանը դեռ չի գտնվել:



ArmLur.am լրատվականի հետ զրույցում Ծափաթաղի համայնքապետ Դավիթ Գզողյանը նշեց, որ երեխան կորել է տան մոտակայքից. ողջ գիշեր որոնողական աշխատանքներ են իրականացվել: Այլ մանրամասներ համայնքապետը չցանկացավ հայտնել:

«Երեխան տնից դուրս է եկել. նա մենակ չի եղել, փոքրիկի հետ էր չորս տարեկան մի երեխա: Վերջինս, սակայն, ոչինչ չի կարողանում մեզ հայտնել:

Վերջին անգամ այդ երեխան է եղել Տիգրանի հետ, նա որոշակի խնդիրներ ունի եւ չի կարողանում խոսել»,- ArmLur.am լրատվականին հայտնեց Արտանիշ համայնքի վարչական ղեկավար Ռոբերտ Շուշանյանը:

Արտանիշի համայնքապետը նաեւ տեղեկացրեց, որ համայնքն ամբողջովին ներգրավված է Ծափաթաղում իրականացվող որոնողափրկարարական աշխատանքներին:

Ինչպես Ռոբերտ Շուշանյանն է հայտնում՝ հարակից համայնքներից եւս միացել են որոնողական աշխատանքներին:

Հիշեցնենք՝ հայտնել էինք, որ հոկտեմբերի 27-ին Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ համայնքի բնակիչ 3-ամյա Տիգրան Օգանեսովը, դեռեւս անհասկանալի պայմաններում, կորել է:

(28.10.2025-ի ուշ գիշերվա դրությամբ երեքամյա փոքրիկին դեռ չէին գտել):

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱՐՎԱԾԸ ՎՆԱՍԵԼ Է ԲԵԼԳՈՐՈԴԻ ԱՄԲԱՐՏԱԿԸ

Ուկրաինայի զինված ուժերի 16-րդ բանակային կորպուսը հայտնել է, որ ռուսական Բելգորոդի մոտ գտնվող ամբարտակը վնասվել է ուկրաինական հարվածի հետեւանքով, ինչի պատճառով ջրաշիթ է առաջացել: Դրանով կտրվել է այն ռուսական զորախմբերի կապը, որոնք անցել էին Սեւերսկի Դոնեց գետը Վովչանսկի շրջանում՝ Խարկովի մարզում:

Բելգորոդի նահանգապետ Վյաչեսլավ Գլադկովը հաստատել է վնասի փաստը՝ նշելով, որ նոր հարվածի դեպքում կարող է առաջանալ ջրհեղեղի վտանգ, եւ բնակիչների մի մասը կարող է տարհանվել: Այս պահին ջուրը միայն մի քանի այգետնակային տարածք է ծածկել, բնակելի տներ չեն վնասվել:

Ուկրաինական կողմի տվյալներով՝ Բելգորոդի ջրամբարի ջրի մակարդակը մեկ օրում նվազել է շուրջ մեկ մետրով, ինչի հետեւանքով ջուրը լցվել է ռուսական որոշ դիրքեր, իսկ նրանց մատակարարման ուղիներն էապես բարդացել են: Այդպիսով՝ գետի մյուս կողմում գտնվող ռուսական ստորաբաժանումները փաստացի կտրվել են իրենց հիմնական ուժերից:

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԿՐՃԱՏՎՈՒՄ Է

Հայաստանի էկոնոմիկայի նախարարությանը 2026 թվականի համար պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 74 մլրդ 514 մլն դրամ, ինչը նախորդ տարվա հատկացումից պակաս է 5 մլրդ դրամով:

Այս մասին Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկման ընթացքում հայտնեց ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

«Տասնյակ միջոցառումներ կան, որոշ տեղերում ունենք ավելացումներ, որոշ տեղերում ունենք նվազեցումներ՝ կապված տարբեր ծրագրերի պահանջարկի եւ ստանձնած պարտավորությունների հետ», - ասաց Հովհաննիսյանը:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում ընթանում են «ՀՀ 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկումները: Հայաստանի պետական բյուջեի ծախսերը 2026-ին նախատեսվում են 3 տրիլիոն 628 միլիարդ դրամ:

ՀՈՍՊԻՏԱԼԱՑՎԵԼ ԵՆ

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնից հոկտեմբերի 27-ին՝ ժամը 19:00-ին, ստացել է հաղորդագրություն այն մասին, որ «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» են հոսպիտալացվել երեք անձ՝ «սուր աղիքային վարակ» ախտորոշմամբ:

«Պարզվել է, որ հոկտեմբերի 23-ին բուժառուները՝ երեք հնդիկ ուսանող, Երեւանի Կոմիտաս 58 հասցեում գործող «Ֆրայ Դեյ» («Fry Day») սրճարանում կերել են հավի մսով պիցցա», - նշված է ՍԱՏՄ-ի տարածած հաղորդագրության մեջ:

Նույն հաղորդագրության մեջ ընդգծվում է, որ Տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչներն անմիջապես վերահսկողական գործողություններ են ձեռնարկել տվյալ հանրային սննդի օբյեկտում, վերցվել են նմուշներ հավի մսով պիցցայից, դրա պատրաստման հումքից եւ ներկայացվել լաբորատոր փորձաքննության:

Վերահսկողության եւ լաբորատոր հետազոտության արդյունքների մասին կհրապարակվի լրացուցիչ:

ԻՆՉ Է ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԱՆԵԼ ՄԱԿՐՈՆԸ

Մակրոնը երազում է Ուկրաինայում ռազմական միջամտության մասին: Այս մասին հայտնել է Ռուսաստանի արտաքին հետախուզության ծառայությունը:

Գործակալության տվյալներով՝ Ֆրանսիայի գլխավոր շտաբը պատրաստվում է մինչեւ 2000 զինվորներից եւ սպաներից բաղկացած ռազմական կոնտինգենտ (հավաքակազմ) տեղակայել Ուկրաինա՝ Կիեւին օգնելու համար:

Հիշեցնենք՝ Ուկրաինան շարունակում է պատերազմել ՌԴ-ի հետ:

Ռուս-ուկրաինական շարունակվող բախումը կանգնեցնելու համար կարծես թե շահագրգռված է ամերիկյան կողմը: ԱՄՆ նախագահը Դոնալդ Թրամփը մի քանի անգամ հույս է հայտնել, որ իրեն կհաջողվի կանգնեցնել պատերազմը: Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու հետ հանդիպման ժամանակ Սպիտակ տան առաջնորդը նշեց, որ խաղաղությունը կհաստատվի եռակողմ՝ Պուտին-Թրամփ-Զելենսկի հանդիպման ձեւաչափով:

Սպիտակ տանը Թրամփ-Զելենսկի հանդիպմանը ներկա էր նաեւ եվրոպական կողմը, որի ժամանակ էլ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը պնդեց, որ եռակողմ հանդիպման փոխարեն պետք է քառակողմ հանդիպում լինի, որին պարտադիր պետք է մասնակցի եվրոպական կողմը:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար, 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

COVID-19-Ի ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ՝ ԸՆԴԴԵՄ ՔԱՂՑԿԵՂԻ

Հետազոտությունները ցույց են տվել, որ COVID-19-ի mRNA պատվաստանյութերը կարող են ակտիվացնել իմունային համակարգը եւ ոչնչացնել քաղցկեղածին բջիջները, հատկապես այն հիվանդների համար, որոնց ուռուցքները լավ չեն արձագանքում իմունոթերապիային: Հայտնում է Live Science-ը:

Կլինիկական տվյալները վկայում են, որ Pfizer կամ Moderna պատվաստանյութերը, ստացած հիվանդների մոտ, մեծացնում են ողջ մնալու շանսերը, նույնիսկ դժվարակտիվ ուռուցքների դեպքում: Այս փաստը հավաստող գիտական, ապացուցված հետազոտություններ չկան:

Կենդանական մոդելներում պարզվել է, որ պատվաստանյութերը ուժեղացնում են իմունային համակարգի հակաուռուցքային արձագանքը:

Կլինիկական փորձարկումներ են պլանավորվում՝ ստուգելու, թե ինչպես կարելի է պատվաստանյութերը ներառել իմունոթերապիայի հետ բուժման մեջ:

ԼԻՏՎԱՆ ԿԱՐԳԵԼԱՓԱԿԻ՞ ՏԱՐԱՆՑՈՒՄԸ

Լիտվան պատրաստ է արգելափակել տարանցումը Ռուսաստանի Կալինինգրադի մարզ՝ ելնելով ազգային անվտանգության նկատառումներից: Այս մասին լիտվական ազգային ռադիոյին (LRT) հայտնել է երկրի արտաքին գործերի նախարար Կյաստուտիս Բուդրիսը:

«Մենք իրավունք ենք վերապահում փակել տարանցումը, եթե դա անհրաժեշտ է մեր անվտանգությունն ապահովելու համար, իհարկե, տեղեկացնելով Եվրամիության ինստիտուտներին եւ մասնակից երկրներին», - ասել է Բուդրիսը:

«Նման քայլ կարող է ձեռնարկվել, եթե հաստատվի Ռուսաստանի մասնակցությունը Բելառուսից օդերեւութաբանական զոնդերի օգնությամբ մաքսանենգությանը», - հավելել է նա:

Ինչպես ընդգծել է Լիտվայի ԱԳ նախարարը, տարանցման արգելափակումն «ամենեւին չպետք է բացառել»:

Կալինինգրադ տարանցումն իրականացվում է ԵՄ-ի եւ Ռուսաստանի միջեւ գործող համաձայնագրի եւ դրանում ամրագրված պարտավորությունների հիման վրա: Սակայն, ինչպես հայտարարում է Բուդրիսը, «պետությունը կարող է բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել իր անվտանգությունն ապահովելու համար, եթե դրա կարիքը կա»:

Ավելի վաղ Վիլնյուսը Մինսկին ծանուցել էր լիտվա-բելառուսական սահմանն «անորոշ ժամկետով» փակելու մասին: Անցյալ շաբաթ Լիտվան երեք անգամ ժամանակավորապես դադարեցրել էր Բելառուսի հետ սահմանային անցակետերում ձեւակերպումը, քանի որ ծառայություններն արձանագրել էին Բելառուսի տարածքից մաքսանենգ ապրանքներով օդերեւութաբանական զոնդերի ժամանում: Աշխատանքն էր դադարեցրել նաեւ Վիլնյուսի օդանավակայանը:

«ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳԻՐ Գ

ԴՐԱԽՏԻԿ ԳՅՈՒՂԻ ԴՐԱԽՏԱՅԻՆ ԱՆԿՅՈՒՆԸ. «ԵՐԱՄԱԿ»

Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղում Կարեն Ղալեչյանը ձիավարության ու բնության սիրահարների համար ստեղծել է յուրահատուկ վայր՝ «Երամակը»:

«Երամակ» գաստրոբակը տարեկան ընդունում է հարյուրավոր այցելուների, ովքեր կարող են ձիարշավել Արեգունի լեռներ, ինչպես նաեւ տեղում համտեսել հայկական ավանդական ճաշատեսակները:

Երամակը «Ակբա» Ֆեդերացիայի եւ NABU Հայաստանի «Գյուղական տուրիզմի զարգացման» ծրագրի շահառուներից է: Դրամաշնորհի օգնությամբ հյուրատուն-գաստրոբակը համալրվել է հացի փռով՝ հյուրերին հնարավորություն տալով համտեսել տեղում պատրաստած թարմ հացը:

«Դրախտիկը Սեւանի ափին գտնվող գյուղ է, այստեղ հիմնականում անասնապահությամբ են զբաղվում: Գյուղը ճանաչելի դարձնելու գործում մեր ներդրումը շատ մեծ է. մեզ մոտ աշխարհի տարբեր երկրներից են գալիս: Մենք այս գործին շատ գրագետ ենք մոտենում, անընդհատ վերապատրաստվում ենք, զուգահեռ մասնակցում տարբեր սեմինարների: Մեր ռազմավարության մեջ նախատեսել էինք, որ պետք է փուռ ունենանք ու մեր ավանդական հացը թխենք տեղում: «Ակբա» Ֆեդերացիան ծանոթացավ մեր նպատակներին եւ իր ներդրումն ունեցավ դրանց իրագործման ճանապարհին: Երազանքի գործ է. յուրաքանչյուր ոք, ով սրտով նվիրվում է իր երազանքի գործին, չի կարող չհաջողել»,- նշել է «Երամակ» ձիարշավարանի հիմնադիր Կարեն Ղալեչյանը:

Կարենի հաջորդ նպատակը «Երամակը» ձիարշավարանից «ռեզորթի» վերածելն է:

«Ակբա» Ֆեդերացիան «Ակբա» բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի ավելի քան 75 տոկոս մասնաբաժին: «Ակբա» բանկում ունեցած մասնակցության շնորհիվ Ակբա Ֆեդերացիան նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու ամրապնդմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին:

IDBank Գ

BACEE 50-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՐԾԱԹԵ ՀՈՎԱՆԱՎՈՐ

2025 թվականի հոկտեմբերի 20-21-ին IDBank-ը մասնակցեց Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի Բանկային Ասոցիացիայի (BACEE) 50-րդ հոբելյանական միջազգային բանկային համաժողովին՝ որպես արծաթե հովանավոր: Համաժողովը նվիրված էր Ասոցիացիայի 25-ամյակին եւ տեղի ունեցավ Ավստրիայի Վիեննա քաղաքում՝ համախմբելով Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի, Հարավարեւելյան Եվրոպայի, Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի բանկային եւ ֆինանսական ոլորտների առաջատար ղեկավարներին ու մասնագետներին:

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

Բանկը ներկայացնում էր Վարչության նախագահ Միհեր Աբրահամյանը: Նա նաեւ մասնակցեց տարածաշրջանային բանկերի ղեկավարների կլոր սեղան-քննարկմանը՝ խոսելով տարածաշրջանի ֆինանսական միջավայրի ձեւավորող հիմնական մարտահրավերների, ռազմավարությունների եւ հաջողության օրինակների մասին:

IDBank-ի մասնակցությունը եւս մեկ անգամ ընդգծում է միջազգային համագործակցության, տարածաշրջանային գործընկերության զարգացման եւ ֆինանսական ծառայությունների նորարարական մոտեցումների նկատմամբ հանձնառությունը: 2025 թվականի ապրիլին պաշտոնապես միանալով BACEE-ին՝ բանկը շարունակում է ամրապնդել իր դիրքերը միջազգային ֆինանսական համայնքում եւ նպաստել զարգացող շուկաներում բանկային համակարգի ապագայի վերաբերյալ երկխոսությանը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԻԱՍԻՆ ԵՆ ՆՇԵԼ ԵՐԳՉՈՒՀՈՒ 41 ԱՄՅԱԿԸ

ՔԵԹԻ ՓԵՐԻՆ ԵՎ ՋԱՍԹԻՆ ԹՐՅՈՒԴՈՆ ՉԵՆ ԹԱՔՑՆՈՒՄ, ՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ

Ամերիկացի երգչուհին եւ Կանադայի նախկին վարչապետը միասին նշել են Փերիի 41-ամյակը՝ չթաքցնելով իրենց հարաբերությունները:

Անցյալ ամառ երգչուհի Քեթի Փերին բաժանվեց դերասան Օռլանդո Բլումից, սակայն միայնակ չմնաց երկար ժամանակ: Այս ամսվա սկզբին սկսեցին շրջանառվել լուրեր նրա եւ Կանադայի նախկին վարչապետ Ջասթին Թրյուդոյի միջեւ ձեւավորված սիրավեպի մասին:

Առաջին անգամ պապարացիները նրանց լուսանկարել էին ռեստորանում՝ մտերմիկ զրույցի ընթացքում: Շատերը սկզբում չէին հավատում, որ քաղաքական եւ երաժշտական աշխարհի ներկայացուցիչների միջեւ կարող են զգացմունքներ ծագել, ու ենթադրում էին, թե նրանց հանդիպումները զուտ գործնական բնույթ ունեն:

Սակայն հոկտեմբերի սկզբին Սանտա Բարբարայի ափերին հանգստացող մի խումբ զբոսաշրջիկներ ակամա ականատես են դարձել Փերիի եւ Թրյուդոյի ջերմ գրկախառնություններին: Նրանց նկատել էին 24 մետրանոց զբոսանավի վրա՝գրկախառնված ու սիրալիր զրուցելիս:

Կարծես թե Քեթի Փերին եւ Ջասթինը այլեւս չեն փորձում թաքցնել իրենց հարաբերությունները հանրության աչքից:

TMZ-ի փոխանցմամբ՝ ամերիկացի երգչուհի Քեթի Փերին եւ Կանադայի նախկին վարչապետ Ջասթին Թրյուդոն վերջապես հաստատել են իրենց սիրավեպի մասին լուրերը, երբ միասին գտնվել են Փարիզում:

Շաբաթ երեկոյան զույգին նկատել են աշխարհի ամենառոմանտիկ քաղաքում՝ երգչուհու 41-ամյակի տոնակատարության ժամանակ: Փերին հիացմունք է առաջացրել բարակ ժապավեններով կարմիր զգեստով, իսկ Թրյուդոն ընտրել էր դասական կոստյում՝ պահպանելով իր ավանդական էլեգանտությունը:

Աստղերը երջանիկ ու ներդաշնակ տեսք ունեին: Ելույթից հետո նրանք ձեռք ձեռքի տված դուրս են եկել լրագրողներին ընդառաջ եւ միասին նստել են մեքենան ու հեռացել:

Քեթի Փերին եւ Ջասթին Թրյուդոն, կարծես, պատրաստ են իրենց հարաբերությունները դուրս բերել փակ տարածքներից՝ փոխադարձ համակրանքը չթաքցնելով հանրությունից:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԺԱՄԱՆՑ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱՀԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՊԱՏԵՐԸ

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի եւ Գերմանիայի Մյունստերի համալսարանի հնագետների արշավախումբը Հայաստանի անտիկ շրջանի մայրաքաղաք Արտաշատում բացահայտել է Հայաստանի՝ մինչեւ այսօր հայտնի ամենահին եկեղեցու հիմնապատերը: Եկեղեցին գտնվել է Հին Արտաշատի 17-րդ բլրի արեւելյան լանջին եւ զբաղեցնում է մոտ 1000 քմ մակերես:

«Ըստ ստացված ռադիոածխածնային տվյալների՝ այս կառույցը վերաբերում է IV դարի առաջին կեսին ու, փաստորեն, Հայաստանի հնագիտորեն փաստագրված վաղագույն եկեղեցին է», - արշավախմբի ղեկավար, Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի Հին Հայաստանի հնագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Մկրտիչ Զարդարյանի խոսքերն է մեջբերված ԳԱԱ-ի տարածած հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ բացահայտումը կարեւոր վկայություն է Հայաստանում վաղ քրիստոնեության մասին: Զարդարյանի խոսքով՝ հայտնագործության հիմնարար նշանակությունը այն է, որ էապես լրացնում է Հայաստանում քրիստոնեության տարածման մեխանիզմների եւ վաղնջագույն հոգեւոր կառույցների ճարտարապետության մասին պատկերացումները:

Սա առաջին ութանկյուն եկեղեցին է, որը հայտնաբերվել է Հայաստանում:

«Ութանկյուն, չորս խաչաձեւ ելուստներով եկեղեցիներն այստեղ մինչ այժմ հայտնի չէին, սակայն մենք ծանոթ ենք դրանց Արեւելյան Միջերկրականի տարածաշրջանից, որտեղ նման կառույցներն ի հայտ են գալիս հենց մ.թ. IV դարից ի վեր»,- նկատում է Մկրտիչ Զարդարյանը:

Եկեղեցին կառուցված է եղել կրաշաղախով ամրացված տեղական քարից եւ, ամենայն հավանականությամբ, ունեցել է հարթ, սվաղված պատեր: Պատերը տարբեր բարձրությամբ են պահպանվել, որոշ հատվածներում հասնում են 2.6 մետրի, որոշ տեղերում՝ մոտ կես մետրի: Գտածոների տեսականին ու որակն ուսումնասիրելով՝ հնագետները եզրակացրել են, որ եկեղեցին կղմինդրածածկ է եղել եւ ունեցել է շքեղ ներքին հարդարանք: Այդ մասին են վկայում այստեղ հայտնաբերված փոքրասիական մարմարից պատրաստված պատերի երեսպատման բազմաքանակ սալերը եւ տարատեսակ քանդակազարդ բեկորները:

Աշխատանքն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի «Արտաշատը՝ Անտիկ Հայաստանի մշակութային, տնտեսական եւ սոցիալական համակարգում» բազային թեմայի եւ Գերմանական հետազոտական հիմնադրամի (DFG) Artaxata Project-ի շրջանակում:

Պեղումների արդյունքները պատրաստվում են հրապարակման:

«ԿՆՔԱՀԱՅՐԸ» ՖԻԼՄԻ ՌԵԺԻՍՈՐԸ ՎԱՃԱՌՈՒՄ Է ԻՐ ԻՐԵՐԸ

«Կնքահայրը» ֆիլմի ռեժիսոր Ֆրենսիս Ֆորդ Կոպոլան ստիպված է վաճառել իր իրերը՝գումարի սղության պատճառով: Այս մասին հայտնում է New York Times-ը, փոխանցում է gazeta.ru-ն:

Դեկտեմբերի 6-ին ռեժիսորը աճուրդի կհանի յոթ ձեռքի ժամացույցներից բաղկացած հավաքածուն:

«Ես պետք է որոշակի գումար ստանամ ջրի երեսին մնալու համար», - բացատրել է Կոպոլան:

Կոպոլայի վերջին ֆիլմը՝ «Մեգալոպոլիսը», լույս է տեսել 2024 թվականին, որի արտադրության համար ռեժիսորը վճարել է սեփական գրպանից:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԸ՝ ՄՐՑԱՎԱՐ

Կանանց ծանրամարտի Հայաստանի հավաքականի նախկին ծանրորդուհի, Եվրոպայի չեմպիոն Հռիփսիմե Խուրշուդյանը դարձել է ծանրամարտի միջազգային կարգի մրցավար: Այս մասին հայտնում է ՀԾՖ-ի մամուլի ծառայությունը: Խուրշուդյանը միջազգային կարգի մրցավարի կոչումը ստացել է Ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի կողմից: Այսուհետեւ նա իրավունք ունի մասնակցելու Եվրոպայի եւ աշխարհի առաջնությունների մրցավարական աշխատանքներին:

«Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիան հետեւողական աշխատանքներով շարունակում է խորացնել համագործակցությունը միջազգային կառույցների հետ: Ի սրտե շնորհավորում եմ Հռիփսիմե Խուրշուդյանին՝միջազգային կարգի մրցավարի կոչում ստանալու կապակցությամբ»,- իր շնորհավորական խոսքում նշել է Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ Արայիկ Հարությունյանը:

ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՎ Մ–23–Ի ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիան հրապարակել է Եվրոպայի երիտասարդների եւ մինչեւ 23 տարեկանների առաջնություններում Հայաստանի հավաքականների մրցելույթների ժամանակացույցը:

Երիտասարդներ.

Հոկտեմբերի 30-ին՝ ժամը 17:00-ին. 71 կգ՝ Տիգրան Կարապետյան ու Նարեկ Գրիգորյան

Հոկտեմբերի 31-ին՝ ժամը 15:00-ին. 79 կգ՝ Նարեկ Մկրտչյան ու Մարտին Պողոսյան

Նոյեմբերի 2-ին՝ ժամը 15:00-ին. 94 կգ՝ Գրիգոր Ղազարյան, Վալերիկ Մովսիսյան

Նոյեմբերի 3-ին՝ ժամը 17:00-ին. 110 կգ՝ Միշա Մելքոնյան

Նոյեմբերի 3-ին՝ ժամը 21:00-ին. +110 կգ՝ Վարդգես Մարգարյան

Հոկտեմբերի 29-ին՝ ժամը 17:00-ին. 58 կգ՝Ալեքսանդրա Գրիգորյան

Նոյեմբերի 1-ին՝ ժամը 15:00-ին. 69 կգ՝ Մերի Միսակյան

Նոյեմբերի 2-ին՝ ժամը 17:00-ին. 77 կգ՝ Աննա Ամրոյան

Նոյեմբերի 3-ին՝ ժամը 13:00-ին. 86 կգ՝ Էմմա Պողոսյան

Նոյեմբերի 3-ին՝ ժամը 15:00-ին. + 86 կգ՝ Ալինա Սուքիասյան

Մինչեւ 23 տարեկաններ.

Հոկտեմբերի 29-ին՝ ժամը 19:00-ին. 60 կգ՝ Գառնիկ Չոլակյան ու Սեյրան Խուդանյան

Հոկտեմբերի 30-ին՝ ժամը 19:00-ին. 71 կգ՝Գոռ Սահակյան

Նոյեմբերի 2-ին՝ ժամը 19:00-ին. 88 կգ՝ Սուրեն Գրիգորյան

Նոյեմբերի 4-ին՝ ժամը 11:00-ին. 94 կգ՝ Մնացական Աբրահամյան

Նոյեմբերի 4-ին՝ժ.15:00-ին. 110 կգ՝Գարիկ Կարապետյան ու Պետրոս Պետրոսյան

Նոյեմբերի 4-ին՝ժամը 17:30-ին. +110 կգ Աշոտ Մովսիսյան

Նոյեմբերի 3-ին՝ ժամը 19:00-ին. 86 կգ՝ Լիանա Գյուրջյան

Նոյեմբերի 4-ին՝ժամը 13:00-ին. + 86 կգ՝ Մերի Թումասյան:

● Հոկտեմբերի 31-ին՝16:00-ին, թատրոն «Կայարան»-ում տեղի կունենա «Անահիտ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.500-3.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր չեն կարող օգտվել սոցիալական փաթեթի ծառայություններից: Ո՞ր աշխատողները չունեն նման իրավունք:

Ռիմա Հայրապետյան (40 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սոցիալական փաթեթը չի տարածվում տվյալ մարմնում սոցիալական փաթեթի շահառուի վերջին վեց ամսվանից պակաս աշխատանքային ստաժ ունեցող անձանց, կես դրույքից պակաս դրույք (նորմալ աշխատաժամանակի 50 տոկոսից պակաս աշխատաժամանակ) ունեցող անձանց, հղիության եւ ծննդաբերության, ինչպես նաեւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող նպատակային արձակուրդում գտնվող անձանց, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով բարձրաստիճան պաշտոնատար անձանց վրա՝ բացառությամբ հղիության եւ ծննդաբերության նպատակային արձակուրդից, մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող նպատակային արձակուրդից, կադրերի ռեզերվից, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից վերադարձած անձանց: Թվարկված անձանց վերջին վեց ամսվա աշխատանքային ստաժը հաշվարկվում է առանց նշված ժամանակահատվածի: Ջինծառայողների դեպքում մեկ զորամասից մեկ այլ զորամաս տեղափոխվելը չի դիտարկվում մեկ այլ մարմնի տեղափոխություն, սակայն այդպես է դիտարկվում հանրապետական գործադիր մարմնի փոփոխությունը (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմ տեղափոխվելը):

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Յուրաքանչյուր աշխատակցի համար սոցիալական փաթեթով նախատեսված գումարը կազմում է 11 հազար դրամ: Սոցիալական փաթեթը ամսական գումար է, որը տարեկան կտրվածքով կազմում է 132,000 ՀՀ դրամ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՎՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր են համարվում ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար վճարողներ:

Համլետ Հակոբյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հ. Հակոբյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետություն ծխախոտի արտադրանք ներմուծող եւ հանրապետությունում ծխախոտի արտադրանք արտադրող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք: Ծխախոտի արտադրանք ներմուծող քաղաքացիները հաստատագրված վճար վճարող են համարվում 400 հատ սիգարետը կամ սիգարելան եւ 10 հատ սիգարը գերազանցող մասի համար:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարի ընդհանուր գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 15, իսկ մաքսատուրքի հաշվարկային մեծությունը՝ 8.5 տոկոս:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Այն, թե ինչպես ենք վերաբերվում մեր երկրին, ցավոք, արտահայտվում է նաեւ այսպիսի տեսարաններով:

Պետք է ընդունել՝ բավականին տգեղ երեւույթ է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 1 + 5	+13 + 17
Կոտայքի լեռներ	+ 1 + 4	+13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 8	+17 + 20
Գեղարքունիք	0 + 5	+13 + 16
Լոռի	+ 5 + 9	+16 + 19
Տավուշ	+ 8 + 11	+19 + 21
Արագածոտնի լեռներ	0 + 4	+12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 9	+ 18 + 21

Արարատ	+ 5 + 9	+18 + 21
Արմավիր	+ 7 + 10	+20 + 23
Վայոց ձորի լեռներ	0 + 4	+12 + 16
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 10	+20 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 4	+15 + 17
Սյունիքի հովիտներ	+ 9 + 12	+18 + 22
ԼՂՀ	+ 9 + 13	+18 + 22
Երեւան	+10 + 13	+18 + 20

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.10.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*